

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2018թ. սեպտեմբերի 28-ի նիստի

Խորհրդի 36 անդամներից ներկա էին 31-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է): Նախքան օրակարգային հարցերին անդրադառնալը խորհրդի քարտուղարը ներկայացրեց նաև խորհրդի կազմում կատարված փոփոխությունները և շնորհավորեց խորհրդի նոր անդամներին:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատում:
2. Գիտական հաղորդում (զեկ.՝ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Գ.Հարությունյան):
3. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ցերեկային ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին:
4. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:
5. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատում:**

Խորհրդի նախագահ Գ.Ղազինյանը ներկայացրեց գիտական խորհրդի 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը, որով նախատեսված է թվով ինը հերթական նիստերի անցկացում՝ ըստ անհրաժեշտության արտահերթ նիստեր հրավիրելու հնարավորությամբ: Խորհրդի քարտուղարը նշեց, որ նիստերի՝ ծրագրված օրակարգն ընդգրկում է գիտական հաղորդումներ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոնների կողմից իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում, ընթացիկ և եզրափակիչ քննությունների արդյունքների ամփոփում, ֆակուլտետի ընթացիկ գործունեության հետ կապված այլ հիմնական հարցերի քննարկում: Խորհրդի քարտուղարն ընդգծեց, որ հաշվի առնելով ֆակուլտետի զարգացման հայեցակարգի մշակման աշխատանքների իրականացումը՝ ծրագրով նախատեսվել է հրավիրել արտահերթ նիստեր՝ առանձին հարցերի քննարկման նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի

2018-2019 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը:

2. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.' ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Գ.Հարությունյան):

ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Գ.Հարությունյանը ներկայացրեց նորաստեղծ խորհրդի գործունեության կարճատև ժամանակահատվածում ունեցած ձեռքբերումները, այս մարմնի առջև ծառայած խնդիրները, դրա գործունեության ընթացքում ի հայտ եկած իրավական կարգավորման թերություններն ու բացթողումները: Մասնավորապես, Գ.Հարությունյանը նշեց, որ խորհրդի կազմավորումից հետո դրա հիմնական խնդիրը սեղմ ժամկետներում բազմաթիվ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակումն էր, առաջխաղացման ենթակա դատավորների ցուցակի կազմումը և թափուր տեղերի համալրումը:

Անդադառնալով խորհրդի ունեցած ձեռքբերումներին՝ Գ.Հարությունյանը նշեց, որ էապես վերափոխվել է դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքէջը, լուրջ քայլեր են ձեռնարկվել էլեկտրոնային արդարադատության ներդրման ուղղությամբ, մշակվել են արդարադատության արդյունավետության բարձրացման հայեցակարգային մոտեցումներ: Խորհրդի նախագահը նաև նշեց, որ որոշակի աշխատանքներ են իրականացվել արդարադատության մշտադիտարկման համակարգ ներդնելու ուղղությամբ, մասնավորապես մշակվել են համապատասխան հարցաշարեր:

Գ.Հարությունյանը հատուկ անդրադարձավ նաև դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցում գործնականում առկա խնդիրներին՝ ընդգծելով օրենսդրական որոշ կարգավորումների ոչ իրավաչափ և ոչ արդյունավետ բնույթը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ցերեկային ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին:

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանը ներկայացրեց 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքները՝

առկա ուսուցմամբ 1-ին կուրս՝ 147 ուսանող և մագիստրատուրա 1-ին կուրս՝ 60 ուսանող, որից՝

Քրեական իրավունք և դատավարություն մագիստրոսական ծրագիր – 21 ուսանող,

Քաղաքացիական իրավունք և դատավարություն – 8 ուսանող,

Գործարարական իրավունք – 8 ուսանող,

Միջազգային և եվրոպական իրավունք – 10 ուսանող,

Կրիմինալոգիա – 10 ուսանող,

Իրավունքի տեսություն և սահմանադրական իրավունք – 13 ուսանող:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ երաշխավորել հետևյալ անձանց.

Մկրտչյան Պետիկ Վահանի (մագիստրատուրա, 1-ին տարի)՝ Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ.

Ջիլավյան Հրանտ Կամոյի (մագիստրատուրա, 1-ին տարի)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ.

Ջաբադյան Սամվել Դավիդի (մագիստրատուրա, 1-ին տարի)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանաձև Վլադիկ Ներսեսյանցի անվան կրթաթոշակ.

Մելիքսեթյան Կարեն Արտակի (մագիստրատուրա, 1-ին տարի)՝ Յուրի Ղամբարյանի անվան կրթաթոշակ:

5. Ընթացիկ հարցեր:

5.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Էդգար Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Փոփոխել Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Էդգար Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեման և հաստատել այն «Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք».

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի դասախոս Լիանա Մարուքայնի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Փոփոխել Քրեական իրավունքի ամբիոնի դասախոս Լիանա Մարուքայնի թեկնածուական ատենախոսության թեման և հաստատել այն «Ազատագրվում պատժատեսակի կատարման առանձնահատկությունները անչափահաս դատապարտյալների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում և Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում. համեմատական վերլուծություն» վերտառությամբ,

բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք».

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վլադիմիր Վարդանյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ ԲՈԿ-ին դիմելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի որոշումը՝ ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վլադիմիր Վարդանյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ ԲՈԿ-ին դիմելու մասին:

5.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ասպիրանտ Անի Դանիելյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Փոփոխել Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Անի Դանիելյանի թեկնածուական ատենախոսության թեման և հաստատել այն «Մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք-դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն».

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.5 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Գևորգ Վիրաբյանի միջնորդությունը Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոն տեղափոխվելու թույլտվություն տրամադրելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Թույլատրել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Գևորգ Վիրաբյանին տեղափոխվել Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոն:

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան